ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը՝ քաղաք Երևան, Սայաթ-Նովա պողոտա 4 հասցեին հարող տարածքում՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.02.2024թ. հ. N 01/13/4965-2024 գրությունը, որով առաջարկվում է Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտա 4 հասցեին հարող տարածքում տեղադրել Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ, Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի Երվանդ Մանարյանի արձանը:

Հաշվի առնելով, որ 2024 թվականին լրանում է անվանի արվեստագետի ծննդյան 100-ամյակը, նախարարությունն առաջարկում է Հ. Թումանյանի ազգային տիկնիկային թատրոնի հարակից տարածքում տեղադրել Երվանդ Մանարյանի բրոնզե արձանը, որը հեղինակել է քանդակագործ Արմենակ Վարդանյանը:

Արձանը նախատեսվում է տեղադրել 2024 թվականի աշնանը, արձանի իրականացման հետ կապված ծախսերը կհոգա ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Երվանդ Քրիստափորի Մանարյանը ծնվել է Արաքում (Իրան), 1924թ. օգոստոսի 10-ին: 1946թ. ներգաղթել է Հայաստան, սովորել Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի ռեժիսորական ֆակուլտետն ավարտել է 1952 թ.: Որպես դերասան և ռեժիսոր՝ աշխատել է Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում և Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում: 1957-59թթ. եղել է Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի գլխավոր ռեժիսորը:

1959-1961թթ. նույն պաշտոնը վարել է Գորիսի թատրոնում, այնուհետև աշխատել է «Երևան» փաստագրական ֆիլմերի ստուդիայում և համանուն կինոմիավորումում: 1988 թ.-ից եղել է «Ագուլիս» տիկնիկային թատրոն-ստուդիայի գեղարվեստական ղեկավարը:

Նկարահանել է վավերագրական և գեղարվեստական մի շարք ֆիլմեր՝ «Հայկական մանրանկարչություն», «Միքայել Նալբանդյան», «Կառամատույցի կրպակը», «Լույս», «Դեղերի ծնունդը», «Նորից եկավ ամառը» և այլն:

Գրել է սցենարներ «Տժվժիկ», «Տերն ու ծառան», «Սպիտակ ափ» և այլ ֆիլմերի համար: Մամուլում հրատարակել է պատմվածքներ և հոդվածներ:

Մահացել է 2020 թվականի փետրվարի 20-ին Երևանում, 96 տարեկան հասակում:

Կարևորելով Երվանդ Մանարյանի հիշատակը վառ պահելու, ապագա սերունդներին փոխանցելու, ինչպես նաև անվանի արվեստագետների գործունեությունն ու երախտիքը պատշաճ գնահատելու և ներկայացնելու անհրաժեշտությունը, առաջարկվում է տալ համաձայնություն Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը և ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ